ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Հովտաշեն Շիրազի 10/2
Փ.0725
/093/ 99-49-28
hovtashen.ararat@mta.gov.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

17.01.2017 թվականի թիվ 01

## ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17.01.2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 01 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշեց `

Հաստատել Հովտաշեն համայնքի ավագանու 17.01.2017 թվականի թիվ 01 նիստի հետևյալ օրակարգը`

1. Հովտաշեն համայնքի 2017 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին
2. Հովտաշեն համայնքի զարգացման 2017-2021 թվականների հնգամյա ծրագիրը հաստատելու մասին:

Քվեարկության

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա. Ս.Ալեքսանյան | | | |
| Ա. Հ. Հարությունյան | | | |
| Ռ.Օ. Մկրտչյան | | | |
| Գ. Դ.Ներսիսյան | | | |
| Ռ. Հ. Մկրտչյան | | | |

Համայնքի ղեկավար Ա. Մկրտչյան

*0420067*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


գ.Հովտաշեն Շիրազի 10/2
Փ.0725
/093/ 99-49-28
hovtashen.ararat@mta.gov.am


## *ՈՐՈՇՈՒՄ*

17.01.2017 թվականի թիվ 02-Ն

ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշեց՝

2017 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. 2017 թվականի վարչական բյուջեի եկամտային մասում պետական բյուջեից նախատեսված դոտացիայից 17.394.5(տասնյոթ միլիոն երեք հարյուր իննսունչորս հազար հինգ հարյուր) դրամից պակասեցնել 10.000 (տաս հազար) դրամ և նախատեսել 17.384.5(տասնյոթ միլիոն երեք հարյուր ութսունչորս հազար հինգ հարյուր) դրամ:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ ծրագրի (11-01-02-51) գործառնական դասակարգման 4891 հոդվածից պակասեցնել 10.000 (տաս հազար) դրամ և նախատեսել 1.120.252 (մեկ միլիոն հարյուր քսան հազար երկու հարյուր հիսուներկու ) դրամ:

2. 2017 թվականի ֆոնդային բյուջեի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը ավելացնել 23.890(քսաներեք հազար ութ հարյուր իննսուն)դրամով և նախատեսել 2.556.023 (երկու միլիոն հինգ հարյուր հիսունվեց հազար քսաներեք)դրամ:

Գույքի նկատմամբ իրավունքների գրանցում և տեղեկատվության տրամադրում ծրագրի (01-06-01-60) գործառնական դասակարգման 5133 հոդվածին ավելացնել23.890(քսաներեքհազար ութ հարյուր իննսուն) դրամ և նախատեսել 986.056 (ինը հարյուր ութսունվեց հազար հիսուն վեց) դրամ:

Քվեարկության

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա. Ս.Ալեքսանյան | | | |
| Ա. Հ. Հարությունյան | | | |
| Ռ.Օ. Մկրտչյան | | | |
| Գ. Դ.Ներսիսյան | | | |
| Ռ. Հ. Մկրտչյան | | | |

Համայնքի ղեկավար Ա. Մկրտչյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


գ.Հովտաշեն Շիրազի 10/2
Փ.0725
/093/ 99-49-28
hovtashen.ararat@mta.gov.am


# *ՈՐՈՇՈՒՄ*

17.01.2017 թվականի թիվ 03-Ն

ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշեց՝

Հաստատել Հովտաշեն համայնքի զարգացման 2017-2021 թվականների հնգամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Քվեարկության

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա. Ս.Ալեքսանյան | | | |
| Ա. Հ. Հարությունյան | | | |
| Ռ.Օ. Մկրտչյան | | | |
| Գ. Դ.Ներսիսյան | | | |
| Ռ. Հ. Մկրտչյան | | | |

Համայնքի ղեկավար Ա. Մկրտչյան

**Հավելված**
Արարատի մարզի
Հովտաշեն համայնքի ավագանու
թիվ 03-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՈՎՏԱՇԵՆ 2017թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ............................................... 3

2 ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ......................................... 4

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն........................................................ 4

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը................................................ 6

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը........................................................ 8

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ.................................................................................. 9

2.5 Զարգացման խոչընդոտներ ու դժվարություններ............................................ 11

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորրությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն.................................................................... 13

3 ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ.. 14

3.1 Համայնքի զարգացման տեսլական........................................................ 14

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակները........................................ 15

3.3 Համայնքի զարգացումն ապահովող ծրագրային արդի ուղղություններ.................. 15

3.4 Հովտաշեն համայնքում նախատեսվող ծրագրերի հիմնական ուղղությունները՝ ըստ առաջնահերթության.................................................................... 20

3.5. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները............................................ 21

4 ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ 22

5 ՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ 22

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 23

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Հովտաշեն համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով ՀՀ նոր Սահմանադրությունը, ՀՀ կառավարության 2016 թվականի ծրագիրը, համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերը, համայնքի ակտիվ հասարակական զանգվածի առաջարկությունները: Այն ուղղված է համայնքը տնտեսապես ակտիվացնելուն, բարեկարգելուն, համայնքային խնդիրները միասնական սկզբունքով լուծելուն, հասարակությանը համախմբելուն, որն ապահովելու է Հովտաշենի յուրաքանչյուր բնակչի ազատությունը, անվտանգությունն ու բարեկեցությունը: Հայրենի գյուղը յուրաքանչյուրի համար դառնալու է ապահով հանգրվան և սեփական կարողությունների առավելագույնս դրսևորման հնարավորության համայնք: Յուրաքանչյուրը պետք է վստահ լինի, որ սոցիալապես ծանր վիճակն, աղքատությունն ու գործազրկությունն ոչ թե ճակատագիր են, այլ ամենօրյա արդյունավետ և բեղմնավոր աշխատանքի միջոցով հաղթահարվող դժվարություն: Հովտաշենցին պետք է համոզված լինի, որ իր զավակների ապագան ավելի ապահով և բարեկեցիկ է լինելու հայրենի գյուղում: Այս ամենին հասնելու ենք ծրագրավորված, միասնական, հետևողական և համաչափ գործողությունների միջոցով:

Խելացի և ծրագրավորված աշխատանքը դառնալու է աղքատության, անբարեկարգ շրջակա միջավայրի, անմխիթար ենթակառուցվածքների և այլնի դեմ պայքարի մեր հիմնական զենքը՝ համակարգելով շահագրգիռ կողմերի միջև փոխհարաբերությունների համակարգը: Համակարգողի դերում հանդես է գալու տեղական իշխանությունը, որը ծառայելու է որպես միջնորդ քաղաքացիների միջև՝ քաղաքացիաիրավական և գյուղատնտեսական հարաբերությունների համատեքստում: Սակայն պետք է փաստել, որ ՏԻՄ միջնորդության մենաշնորհը մարդկանց միջև կապ ապահովելու գործընթացում քայլ առ քայլ կորցնում է իր ուժը: Այս միտումների զարգացումներն անշուշտ ազդում են և շարունակում են ազդել ներկայում համայնքների զարգացման և կառավարման գործընթացների վրա: Այս խնդիրների պարագայում, ինչպես նաև խնդիրների լուծման համար անհրաժեշտ *սակավ* ֆինանսական և այլ ռեսուրսների համատեքստում անհրաժեշտություն է առաջանում նոր մոդելների և մոտեցումների մշակումն ու ներդրումը, ինչը հնարավորություն կտա ավելի օպտիմալ և արդյունավետ կառավարել առկա ռեսուրսները: Այդ մոդելների և մոտեցումների միջոցով հնարավոր է սահմանել «Խելացի համայնք» հայեցակարգը:

«Խելացի համայնք» հայեցակարգի ներդրմամբ Հովտաշեն համայնքում ձևավորելու ենք ներքոհիշյալ բաղադրիչներից կազմված ռազմավարական դրույթները.

- Ժամանակակից կյանքի ապահովում նորարարական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով, որոնք ապահովում են ծախսերի արդյունավետ օգտագործումը և համայնքում առկա հին գույքի վերանորոգումը և առավել նպատակային օգտագործումը:
- Խելացի կառավարում, խելացի կենսամակարդակ, խելացի մարդիկ, խելացի միջավայր, խելացի տնտեսություն:
- Բարձր տեխնոլոգիաների համայնք, որը բաղկացած է հետևյալ տարրերից՝ արդյունավետ կառավարում, տնտեսական զարգացում, բարձր հեղինակություն:

«Խելացի համայնքի» հայեցակարգի հիմնական սկզբունքների կիրառմամբ Հովտաշեն համայնքի հեռանկարային զարգացումը ենթադրում է մի շարք նախադրյալների առկայություն: Դրանցից կարևորագույնը ինստիտուցիոնալ բարեփոխումների գործընթացն է, որը նախատեսում է հասարակության ժողովրդավարության զարգացում, գյուղատնտեսական հարաբերությունների ազատականացում, վստահության կամ իրավական հիմքերով

գյուղատնտեսական կոոպերացիաների, միավորումների ստեղծում, ինչպես նաև հրապարակայնության և թափանցիկության ապահովում:

Յուրաքանչյուր ոք պետք է տեսնի և զգա մեր կողմից իրականացվող փոփոխությունների արդյունքները, պետք է ունենա ինքնադրսևորման և ինքնաիրացման բոլոր հնարավորությունները: Ընտրությունների արդյունքները գրավականն են այն փաստի, որ այս ծրագիրը պահանջված է ու ժամանակին, և մենք ունենք ժողովրդի աջակցությունը՝ այն կյանքի կոչելու համար:

Կամրապնդվեն ժողովրդավարական ինստիտուտները՝ նպաստելով մասնակցային կառավարման և հանրային իրազեկության մակարդակի բարձրացման ամրապնդմանը: Այս տեսլականի նկատմամբ հավատն է, որ մեզ ուժ կտա փոխվելու, վերափոխելու մեր համայնքը, հետևողականորեն կերտելու այլ Հովտաշեն՝ սերունդներին թողելով ավելի բարեկարգ և տնտեսապես ակտիվ համայնք:

# 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## 2.1Համայնքի ընդհանուր նկարագրություն

Համայնքի տեղական ինքնակառավարումը իրականացնում են համայնքի ղեկավարը, ավագանու անդամները և համայնքապետարանի աշխատակազմը, որոնց գործառույթների իրականացմանը օժանդակելու է նոր ձևավորվող Հովտաշենի քաղաքացիական նախաձեռնության խորհուրդը (տե՛ս գծապատկեր 1[1]):




**Գծապատկեր 1.** Հովտաշեն համայնքի ինքնակառավարման համակարգ:

Հովտաշեն համայնքը գտնվում է Արարատի մարզի Արտաշատի տարածաշրջանում, Արտաշատ քաղաքից 15կմ հյուսիս-արևմուտք: Հիմնադրվել է 1920-ական թվականներին: Համայնքի բնակիչներն եղել են կովկասյան թաթարները: 1930-ական թվականներին գյուղում բնակություն են հաստատել Արևմտյան Հայաստանից եկած ընտանիքներ՝ Սուրմալուից, Նուխիից: 1937թ. Վայոց Ձորի Խնձորուտ գյուղից, (նախկինում Ալմալու) և 1946թ. Պարսկաստանից, 1950-ական թվականներին Աբովյանի շրջանի Հացավան և այլ գյուղերից, ինչպես նաև Մարտունու շրջանի գյուղերից եկածներ: Գյուղը նախկինում անվանվել է Մուղանլու:

Գյուղն ընկած է Հրազդան գետի ձախ ափին՝ Արարատյան հարթավայրում: Տարածքը կազմում է 407,8 հա: Ծովի մակարդակից ունի 827մ բարձրություն: Կլիման բարեխառն է:

[1] Գծապատկերում առկա **ՀՔՆԽ** (Հովտաշենի քաղաքացիական նախաձեռնության խորհուրդ) վերաբերյալ մեկնաբանությունները տե՛ս 3-րդ գլուխ;

Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -20-ից -25: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է +24-ից +26 աստիճան, իսկ առավելագույնը՝ +42 աստիճան: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300մմ է: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է ոռոգման գոտում:

Գյուղն ունի 290 տնտեսություն: Ըստ 2011թ-ի ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ համայնքի բնակչությունը կազմում է 1230 մարդ, որից 48% տղամարդիկ են, իսկ կանայք՝ 52%: Ներկայումս փաստացի ապրում են 1118 մարդ (տե՛ս աղյուսակ 1):

**Աղյուսակ 1**. Բնակչության իրավիճակային վերլուծություն

| Հ/Հ | ՑՈՒՑԱՆԻՇ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|
| 1 | Առկա տնային տնտեսությունների թիվը | 260 |
| 2 | Բնակչության թիվը | 1250 |
| 2.1 | Առկա բնակչության թիվ | 1130 |
| 2.2 | Հայեր | 1116 |
| 2.3 | Եզդիներ | 93 |
| 2.4 | Ռուսներ | 1 |
| 2.5 | Տղամարդիկ | 526 |
| 2.6 | Կանայք | 594 |
| 2.7 | 0-6 տարեկան | 102 |
| 2.8 | 7-17 | 118 |
| 2.9 | 18-63 | 775 |
| 2.10 | 63-ից բարձր | 125 |
| 3 | Կենսաթոշակառուներ | 142 |
| 3.1 | Տարիքային և աշխատանքային | 120 |
| 3.2 | Հաշվանդամության | 22 |
| 3.2.1 | Մանկուց հաշմանդամներ | 5 |
| 4 | Ծնողազուրկներ | 3 |
| 4.1 | Միակողմանի ծնողազուրկ երեխաներ | 2 |
| 4.2 | Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ | 1 |
| 5 | Արցախյան պատերազմի մասնակիցներ | 27 |
| 6 | Աշխատունակներ | 760 |
| 6.1 | Զբաղվածներ | 630 |
| 6.2 | Գործազուրկ | 130 |
| 7 | Նպաստառուների թիվը | 32 |
| 7.2 | Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը | 32 |
| 7.3 | Արցախյան պատերազմում զոհված ընտանիքների թիվը | 2 |
| 8 | Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը | 5 |
| 9 | Արտագնա աշխատանքի մեկնող թիվը | 115 |
| 10 | Արտագնա աշխատանքի մեկնելու պատճառով բացակայող տնտեսությունների թիվը | 25 |

## 2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքի տնտեսության մասնագիտացված ճյուղը գյուղատնտեսությունն է՝ բուսաբուծություն և անասնապահություն, համախառն արտադրանքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը (տե՛ս աղյուսակ 2)[2]: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 283.71 հա, որից 178,57 հա 324 քաղաքացիների սեփականությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները ոռոգելի են, դրանք զբաղեցնում են ողջ մակերեսի 69%: Համայնքի հողերի 40.9% օգտագործվում է որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 166.88 հա: Պտղատու և խաղողի այգիները կազմում են համապատասխանաբար 12.8 հա և 4.3 հա (տե՛ս աղյուսակ 3): Մշակում են ջերմասեր բանջարաբոստանային կուլտուրաներ, պտուղներ (համայնքում առկա է 28,4 հա ջերմոցային տնտեսություններ, որոնք հանդիսանում են բնակիչների սեփականությունը (0,77 հա ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած ջերմոցային տնտեսություն է (տե՛ս աղյուսակ 4)): Զբաղվում են նաև կաթնամսատու անասնապահությամբ:

**Աղյուսակ. 2.** Գյուղ արտադրանքի 2017-2021թթ կանխատեսվող ծավալը

| Գյուղարտադրության Տեսակ | Ծավալ | | | | | | Մթերման շուկա |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2016թ Փաստ | 2017թ կանխ | 2018թ կանխ | 2019թ կանխ | 2020թ Կանխ | 2021թ կանխ | |
| **Խնձոր** | 20 տ | 23տ | 28տ | 31տ | 35տ | 37տ | Ք. Երևան |
| **Ծիրան** | 40տ | 45տ | 50տ | 57տ | 65տ | 71տ | Ք. Երևան |
| **Սալոր** | 15տ | 17տ | 20տ | 22տ | 25տ | 30տ | Ք. Երևան |
| **Թութ** | 10տ | 12տ | 15տ | 19տ | 20տ | 23տ | Ք. Երևան |
| **Տանձ** | 17տ | 20տ | 22տ | 25տ | 28տ | 31տ | Ք. Երևան |
| **Ցորեն** | 21տ | 25տ | 27տ | 29տ | 31տ | 34տ | Ք. Երևան |
| **Գարի** | 15տ | 17տ | 19տ | 21տ | 24տ | 28տ | Ք. Երևան |
| **Կարտոֆիլ** | 30տ | 32տ | 35տ | 38տ | 42տ | 47տ | Ք. Երևան |
| **Ձմերուկ** | 5տ | 10տ | 14տ | 20տ | 25տ | 31տ | Ք. Երևան |
| **Սեխ** | 1,5տ | 3տ | 4տ | 5տ | 7տ | 10տ | Ք. Երևան |
| **Կաղամբ** | 3տ | 5տ | 8տ | 10տ | 12տ | 15տ | Ք. Երևան |
| **Ծաղկակաղամբ** | 2տ | 4տ | 7տ | 9տ | 11տ | 13տ | Ք. Երևան |
| **Վարունգ** | 21տ | 25տ | 28տ | 30տ | 32տ | 35տ | Ք. Երևան |
| **Լոլիկ** | 205տ | 230տ | 237տ | 241տ | 250տ | 257տ | Ք. Երևան |
| **Սմբուկ** | 10տ | 12տ | 15տ | 17տ | 19տ | 20տ | Ք. Երևան |
| **Տաքդեղ(բիբար)** | 20տ | 23տ | 25տ | 30տ | 32տ | 35տ | Ք. Երևան |
| **Գազար** | 0,5տ | 1տ | 2տ | 3տ | 4տ | 6տ | Ք. Երևան |
| **Սոխ** | 5տ | 7տ | 8տ | 10տ | 11տ | 13տ | Ք. Երևան |
| **Սխտոր** | 2տ | 4տ | 6տ | 9տ | 10տ | 12տ | Ք. Երևան |
| **Անասնակեր (տուկ)** | 20000 | 21000 | 21500 | 22000 | 22500 | 23000 | Ք. Երևան |

[2] Այս ենթաբաժնում առկա աղյուսակների տվյալները լրացված են ներկայումս առկա ցուցանիշների և ՀԶԾ կազման աշխատանքային խմբի կողմից իրականացված վերլուծությունների և հաշվարկների պլանային կանխատեսումների համադրմամբ:

| Հողային ֆոնդի հաշվեկշիռ | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | Հողատեսք, գործառնական նշանակություն | Ընդամենը | Սեփականության սուբյեկտ | | | | | | | | |
| | | | քաղաքացիների | Իրավաբանական անձանց | համայնքային | | | | պետական | | |
| | | | | | Ընդամենը | Տրված վարձակալության | չտրված վարձակալության և օգտագործման | Ընդամենը | օգտագործման | Տրված վարձակալության | վարձակալության |
| | ՛ | 1 | 2 | 3 | 4 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1 | Վարելահող | 166.880 | 45.922 | | 20.958 | 20.958 | | | | | |
| 2 | Բազմ. տնկարկներ, ընդամենը | 17.060 | 17.060 | | | | | | | | |
| 3 | ³Û' ÃíáõÙª պտղատու այգի | 12.760 | 12.760 | | | | | | | | |
| 4 | Խաղողի այգի | 4.300 | 4.300 | | | | | | | | |
| 5 | այլ հողատեսքեր | 99.770 | 15.932 | | 83.838 | | 83.838 | | | | |
| 6 | Ընդամենը | 283.710 | 178.914 | | 04.796 | 20.958 | 83.838 | | | | |
| 7 | բնակելի կառուցապատման | 60.633 | 60.633 | | | | | | | | |
| 8 | այդ թվում՝ բնակելի կառուցապատման | 60.633 | 60.633 | | | | | | | | |
| 9 | Հասարակ. Կառուցապատ. | 1.580 | 0.010 | | 0.240 | | 0.240 | 330 | .600 | | .730 |
| 10 | ընդհանուր օգտագործման | 9.417 | | | 9.417 | | 9.417 | | | | |
| 11 | այլ հողեր | 9.330 | | | 9.330 | | 9.330 | | | | |
| 12 | Ընդամենը | 80.960 | 60.643 | | 18.987 | | 18.987 | 330 | .600 | | .730 |
| 13 | Էներգետիկայի | 0.250 | | | 0.250 | | 0.250 | | | | |
| 14 | կոմունալ ենթակառուցվածք | 0.010 | | | 0.010 | | 0.010 | | | | |
| 15 | Ընդամենը | 0.260 | | | 0.260 | | 0.260 | | | | |
| 16 | Պատմական մշակութային | 3.140 | | | 3.140 | | 3.140 | | | | |
| 17 | Ընդամենը | 3.140 | | | 3.140 | | 3.140 | | | | |
| 18 | Գետեր | 8.730 | | | | | | 730 | | | .730 |
| 19 | Ջրանցքներ | 3.350 | | | | | | 350 | | | .350 |
| 20 | հիդրոտեխ. ¨ջրտնտ.այլ օբ. | 23.600 | | | | | | .60 0 | 2.110 | | 1.490 |
| 21 | Ընդամենը | 35.680 | | | | | | .68 0 | 2.110 | | .570 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ | 407.730 | 42.027 | | 28.694 | 21.489 | 07.205 | 7.01 0 | 2.710 | | .300 |

**Աղյուսակ 3.** Հովտաշեն համայնքի հողերի հաշվեկշիռ

**Աղյուսակ 4.** Ջերմոցային տնտեսությունների դինամիկան 2017-2021թթ.

| Ջերմոցային տնտեսություն | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ժամանակակից տեխնոլոգիաներ | | | | | |
| 2016թ. Փաստ. | 2017թ. Կանխ | 2018թ. Կանխ | 2019թ. Կանխ | 2020թ. կանխ | 2021թ. Կանխ |
| 077հա | 1.3հա | 2հա | 2,5հա | 4հա | 5,3հա |
| Ջերմոցային տնտեսություն | | | | | |
| Սովորական տեխնոլոգիաներ | | | | | |
| 2016թ. Փաստ. | 2017թ. Կանխ | 2018թ. Կանխ | 2019թ. Կանխ | 2020թ. կանխ | 2021թ. Կանխ |
| 27,63հա | 27հա | 25 հա | 23հա | 18 հա | 14հա |

**Աղյուսակ 5.** Անասունների թվի դինամիկայի պլանային կանխատեսումը 2017-2021թթ

| Հ/Հ | Անասնագլխաքանակ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016թ. փաստ. | 2017թ. փաստ. | 2018թ. կանխ. | 2019թ. կանխ. | 2020թ. կանխ. | 2021թ. կանխ. |
| **Ընդամենը** | **430** | **453** | **491** | **495** | **505** | **510** |
| Կով | 127 | 137 | 142 | 140 | 142 | 150 |
| Խոզ | 230 | 253 | 259 | 260 | 270 | 280 |
| Ոչխար | 1050 | 1350 | 1940 | 2000 | 2100 | 2150 |
| Թռչուն | 1340 | 1475 | 1515 | 1600 | 1650 | 1700 |

Ունի մշակույթի տուն (600քմ), դպրոց (շենքի մակերեսը 1600քմ, 33 աշխատակից, այդ թվում 3 վարչաշխատող, 20 մանկավարժ, 10 տեխաշխատող, տես աղյուսակ 6), գրադարան (5600 կտոր գիրք 1 աշխատակից), ամբուլատորիա (1 աշխատող), մանկապարտեզ (7000քմ, որից 170քմ շինություն, 8 աշխատող(տե՛ս աղյուսակ 7)) երկու մեքենա՝ մեկը թեթև մարդատար, մյուսը բեռնատար, որը շահագործվում է աղբահանության նպատակով: Համայնքում գործող այլ ձեռնարկություններ են Մխչյանի պոմպակայան Սևան-Հրազդան ջրառ, Արաքս բաշխիչ ցանց, Արաքս արտադրական կոոպերատիվ ՍՊԸ և 3 ԱՁ (մանրածախ առևտուր):

Համայնքում ակտիվ են քաղաքական կուսակցությունները, մասնավորապես՝ ՀՀԿ, ԲՀԿ, ՀՅԴ,ՀՎԿ, ՀԿ-ներից՝ ԵԿՄ:

**Աղյուսակ 6.** Դպրոցի աշակերտների դինամիկան 2017-2021թթ

| Հ/Հ | Աշակերտներ Ընդամենը | Աշխ և աշակերտ թվի դինամիկան ըստ տարիների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | | | |
| | | 106 | 111 | 114 | 122 | 127 |

**Աղյուսակ 7.** Մանկապարտեզի սաների դինամիկան 2017-2021թթ.

| Հ/Հ | Սաներ ընդամենը | Սաների թվի դինամիկան ըստ տարիների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 30 | 30 | 50 | 60 | 60 |

## *2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը*

2016 թվականի նոյեմբերից <<Էյ Թի Փի>> բարեգործական հիմնադրամի և Հովտաշենի համայնքապետարանի համագործակցությամբ մեկնարկել է <<Մեկ ընտանիք մեկ անվանական ծառ>> արշավը, ինչպես նաև համայնքապետարանի միջոցներով համայնքի գլխավոր ճանապարհի լուսավորության բարեկարգման և վերականգման աշխատանքները:

<<Մեկ ընտանիք մեկ անվանական ծառ>> ծրագրի շրջանակներում դպրոցի և մանկապարտեզի տարածքում տնկվել է <<Էյ Թի Փի>> բարեգործական հիմնադրամի կողմից

տրամադրված  շուրջ 150 ծառ և թուփ, ինչն ունենալու է  շարունակական բնույթ 2017-2021թթ-ին (տե՛ս աղյուսակ 8): Պատրաստվում ենք տարին երկու անգամ իրականացնել ծառատունկ <<**Մեկ ընտանիք, մեկ անվանական ծառ**>>  սկզբունքով, որի հիմնական գաղափարը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր բնակիչ կամ ընտանիք համայնքի որևէ հատվածում տնկելու է իր անվանական ծառը և խնամքի համար պատասխանատու է լինելու: Ծառերը երկարակյաց են, և դա մեկ տարվա ծրագիր չէ:

Հայկական վարքագծի մեջ լուրջ խնդիր է. ***եթե իմ անձնական սեփականությունը չէ, ուրեմն ես պատասխանատու չեմ*** մտածելակերպը*:* ՀՀ բնակչության մեծ մասը համայնքային շահը չի դիտարկում որպես սեփականը (չէ որ համայնքը մեր բոլորին է), այլ ինչ որ օտարի, կամ միշտ իրենց դուրս են հանում ընդհանուրի շրջանակներից: Փորձ է կատարվում համայնքի բնակիչների շրջանակներում վերոնշյալ ծրագիրն, ինչպես նաև բոլոր ծրագրերն իրականացնել ոչ թե անձնական շահը համայնքային շահին ստորադասմամբ, այլ այդ երկուսի համադրմամբ:

**Աղյուսակ 8.** Կանաչապատման ծրագրի շրջանակներում տնկվող դեկորատիվ ծառերի և թփերի տնկիների քանակությունը:

| Հ/Հ | **Տնկիների տեսակը** | **Տնկիների թիվը** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2016 Փաստ. | 2017 Կանխ. | 2018 Կանխ | 2019 Կանխ. | 2020 Կանխ. | 2021 Կանխ. |
| 1 | Ծառ/հատ | 120 | 200 | 300 | 300 | 300 | 300 |
| 2 | Թուփ/հատ | 30 | 100 | 200 | 250 | 250 | 250 |

## 2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Հովտաշեն համայնքը հանդիսանում է հանրապետության միջին սոցիալ-տնտեսական իրավիճակ ունեցող համայնք, որի բյուջեի եկամուտների մեծ մասը կազմում են պետական պաշտոնական տրանսֆերները՝դոտացիա(տե՛ս աղույակ 9), ընդհանուր բյուջեն կազմում է 23261000 դրամ:

**Աղուսյակ 9.**Համայնքային բյուջեի պլանային կանխատեսումներ

| ***Եկամտի  տեսակ*** | | ***2016թ. փաստացի*** | ***2017թ. նախա-տեսված*** | ***2018թ. կանխա-տեսված*** | ***2019թ. կանխա-տեսված*** | ***2020թ. կանխատ եսված*** | ***2021թ. կանխա-տեսված*** |
|---|---|---|---|---|---|---|---|
| ***Եկամուտներ ընդամենը*** | | ***23261.0*** | ***23524.5 101,1%*** | ***24229.5 103.0%*** | ***24634.5 101.6%*** | ***24689.5 100.2%*** | ***25044.5 101.4%*** |
| ***1*** | ***Հարկային եկամուտներ*** | ***5499.0*** | ***4860.0*** | ***4910.0*** | ***4960.0*** | ***5010.0*** | ***5060.0*** |
| 1/1 | Հողի հարկ | 2800.0 | 2800.0 | 2800.0 | 2800.0 | 2800.0 | 2800.0 |
| ½ | Գույքահարկ | 2589.0 | 1950.0 | 2000.0 | 2050.0 | 2100.0 | 2150.0 |
| 1/3 | Գույքահարկ շենք և շինութ. | 110.0 | 110.0 | 110.0 | 110.0 | 110.0 | 110.0 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **2** | **Տուրքեր** | **118.0** | **120.0** | **120.0** | **120.0** | **120.0** | **120.0** |
| 2/1 | Տեղական տուրքեր | 118.0 | 120.0 | 120.0 | 120.0 | 120.0 | 120.0 |
| **3** | **Ոչ հարկային եկամուտներ** | **162.5** | **160.0** | **815.0** | **1170.0** | **1175.0** | **1480.0** |
| 3/1 | Հողի վարձ. | 162.5 | 160.0 | 165.0 | 170.0 | 175.0 | 180.0 |
| 3.2 | Շահաբաժիններ | 0 | 0 | 650.0 | 800.0 | 1000.0 | 1300.0 |
| **4** | **Հողի օտարումից** | **97.0** | **1000.0** | **1000.0** | **1000.0** | **1000.0** | **1000.0** |
| **5** | **Դոտացիա** | **17.384.5** | **17.384.5** | **17.384.5** | **17.384.5** | **17.384.5** | **17.384.5** |
| **Ծախսեր ընդամենը** | | **23275.7** | **26245.0** | **26950.0** | **27155.0** | **27410.0** | **27765.0** |
| | **Վարչական բյուջե** | **21894.9** | **22533.0** | **22588.0** | **22643.0** | **22698.0** | **22753.0** |
| **1** | **Կառավարման մարմնի պահպանում** | 12.375.0 | **13043.0** | **13043.0** | **13.098.0** | **13153.0** | **13208.0** |
| **2** | **Նախադպրոցա-կան ուսուցում** | **5112.0** | **5160.0** | **5160.0** | **5160.0** | **5160.0** | **5160.0** |
| **3** | **Աղբահանություն և սան.մաքրում** | **1273.0** | **1200.0** | **1200.0** | **1200.0** | **1200.0** | **1200.0** |
| **4** | **Սոցիալապեսան ապահով անձանցաջակցություն** | **1090.0** | **1100.0** | **1100.0** | **1100.0** | **1100.0** | **1100.0** |
| **5** | **Հասարակական կազմակերպու-թյուններին աջակցություն** | **90.0** | **150.0** | **150.0** | **150.0** | **150.0** | **150.0** |
| **6** | **Պահուստային ֆոնդ** | **1254.9** | **1130.0** | **1.185** | **1.185** | **1.185** | **1.185** |
| **7** | **Արտաքին լուսավորության ցանցի շահ. և պահպ. աշխ.** | **350.0** | **350.0** | **350.0** | **350.0** | **350.0** | **350.0** |
| **8** | **Մշակույթային միջոցառումների իրականացում** | **250.0** | **270.0** | **270.0** | **270.0** | **270.0** | **270.0** |
| **9** | **Գույքի նկատմամբ իրավ. Գրանցում և տեղ. Տրամադրում** | | **30.0** | **30.0** | **30.0** | **30.0** | **30.0** |
| **10** | **Կենսաբազմազանության և բնության պաշտպանու-թյուն** | 100.0 | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** |
| | **Ֆոնդային բյուջե** | **1380.8** | **3712.0** | **4362.0** | **4512.0** | **4712.0** | **5012.0** |
| **1** | **Կառավարման մարմնի պահպանում** | **196.0** | **1200.0** | **1200.0** | **1200.0** | **1200.0** | **1200.0** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Արտաքին լուսավորության ցանցի շահ. և պահպ. աշխ. | 499.8 | 500.0 | 500.0 | 500.0 | 500.0 | 500.0 |
| 3 | Նախադպրոցա-կան ուսուցում | 305.0 | 350.0 | 350.0 | 350.0 | 350.0 | 350.0 |
| 4 | Գույքի նկարդմամբ իրավ. գրանցում և տեղ. Տրամադրում | | 962.0 | 1612.0 | 1762.0 | 1962.0 | 2262.0 |
| 5 | Աղբահանություն և սան.մաքրում | 200.0 | 200.0 | 200.0 | 200.0 | 200.0 | 200.0 |
| 6 | Մայրուղիների և փողոցների վերանորոգում և հիմնանորոգում | 180.0 | 500.0 | 500.0 | 500.0 | 500.0 | 500.0 |

## 2.5 Զարգացման խոչընդոտներ ու դժվարություններ

Հովտաշեն համայնքի առջև ծառացած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝ համայնքի ճանապարհների և համայնքային ենթակայության տակ գտնվող շենք շինությունների անբարեկարգ վիճակը, բնակչության սոցիալապես վատ պայմանները, ինչը մեծապես գյուղատնտեսական անարդյունավետ գործունեության հետևանք է՝ պայմանավորված ոռոգման ջրի սակավությամբ և համապատասխան ոռոգման ցանցի ֆիզիկական և բարոյական մաշվածությամբ, անասնապահության բնագավառում արոտավայրերի պակասությամբ, արտադրական ձեռնարկությունների բացակայությամբ:

Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները փորձենք թվարկել ստորև.

1) Գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման հիմնական խոչնդոտող գործոններն են ներքին և արտաքին ներդրողների բացակայությունը, համայնքի փոքրությունը, իրացման դժվարությունները, բնակիչների շրջանակներում բիզնես գիտելիքների և բիզնես ռիսկի պակասը և այլն:

2) Համայնքի գույքի կառավարումը իրականացնելու խնդրի հիմնական խոչնդոտներն են գործարար միջավայրի և ձեռնարկատիրության ցածր մակարդակը, ֆինանսական ռեսուրսների պակասը, գույքի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը, բնակչության մոտիվացիայի պակասը և այլն:

3) Նախադպրոցական կրթության կազմակերպման խոչնդոտներից են ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով մանկապարտեզի կիսամյակային շահագործումը և մանկական խաղահրապարակի բացակայությունը:

4) Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ, խնդրի խոչնդոտներից են համապատասխան մշակույթային և մարզական կառույցների՝ մասնավորապես մշակույթի տան և մարզադաշտի անմխիթար վիճակը, մարզասրահի և գույքի բացակայությունը և դրանց ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պակասը:

5) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը բարելավելու համար խոչընդոտ է աշխատատեղերի և համայնքային բյուջեում սոցիալական օգնության ֆոնդի պակասը, լրացուցիչ եկամուտների ստացման բացակայությունը:

6) Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը երիտասարդության ներգրավմամբ խնդրի խոչընդոտներից են համապատասխան երիտասարդական, մարզական կառույցների ու կազմակերպությունների բացակայությունը և գործունեության համար գույքի ձեռք բերման անհրաժեշտ ֆինանսական միջոցների պակասը:

7) Համայնքում բնակարանային շինարարության՝ մասնավորապես նորակառույց տների համար խոչընդոտ է համարվում բնակելի տնամերձ հողամասերի սակավությունը և ֆինանսական միջոցների բացակայությունը:

8) Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը խնդրի խոչընդոտներից են աղբամանների, աղբահարթակների բացակայությունը, գերեզմանատան ճանապարհի անբարեկարգ վիճակով պայմանավորված ավտոմեքենաների համար անանցնելիությունը և վերոնշյալ խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունը:

9) Պետության պաշտպանության իրականացման աջակցումը խնդրի լուծման համար կարևոր խոչընդոտ է ռազմահայրենասիրական հասարակական կազմակերպությունների բացակայությունը, կամ ոչ լիարժեք գործունեությունը, ինչպես նաև զինկոմիսարիատում հաշվառված համապատասխան տրանսպորտային միջոցների ոչ սարքին վիճակը:

10) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման խոչնդոտներից են շենքերի և շինությունների ցածր սեսմակայունությունը, ապաստարանների, թաքստոցների և քաղաքացիների անահատական պաշտպանության միջոցների սակավությունը:

11) Գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտ է ոռոգման ցանցի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը, որոշ տեղերում բացակայությունը, գյուղատնտեսական տեխնիկայի պակասը և մաշվածությունը, ջերմոցային տնտեսությունների գերակշիռ մասում ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների բացակայությունը, ժամանակակից տեխնոլոգիաներով և ջեռուցվող ջերմոցային տնտեսությունների սակավությունը:

13) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում խնդրի լուծման դժվարությունները կապված են երիտասարդական կազմակերպությունների և ֆինանսական միջոցների սակավության հետ:

14) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանման խոչընդոտներից են, աշխատատեղերի բացակայությունը, բնակչության սոցիալական վատ վիճակը;

15) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը խոչընդոտ է այն, որ գործում է միայն բուժամբուլատորիան, իսկ խնդրի լուծման համար անհրաժեշտ այլ համապատասխան կառույցներ, սարքավորումներ, ինչպես նաև դեղատուն առկա չեն:

16) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանման դժվարությունները կապված են սոցիալական ծանր վիճակի և բնակչության ու հաշմանդամների ընկալումների հետ:

17) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը խոչընդոտող գործոններից է ազգային և համամարդկային արժեքներ քարոզող միջոցառումների և կազմակերպությունների պակասը;

18) Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտում է անհատ բարեգործների, ինչպես նաև հանրապետական և միջազգային կառույցների հետ ոչ նպատակային, լիարժեք և արդյունավետ համագործակցությունը:

19) Երևան քաղաք, մարզկենտրոն ուղևորափոխադրմանը խոչընդոտում է համայնքով անցնող անմխիթար, և երթևեկության համար ոչ պիտանի միջմարզային ճանապարհը[3]:

## 2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

**Աղյուսակ 10.** Հովտաշեն համայնքի SWOT վերլուծություն

| Հովտաշեն համայնքի ուժեղ կողմեր | Հովտաշեն համայնքի թույլ կողմեր |
|---|---|
| • Գազաֆիկացված է մոտ 97%-ով<br>• Շուրջօրյա ջրամատակարարում<br>• Հասանելի է բջջային կապի 3 օպերատորները<br>• Ֆիզիկական և մտավոր բարձր կարողություններով օժտված աշխատուժ<br>• Մանկապարտեզի առկայություն<br>• Միջնակարգ դպրոցի առկայություն.<br>• Բուժ-ամբուլատորիայի առկայություն.<br>• Հայփոստի առկայություն<br>• Սեփական մեքենայով աղբահանության կազմակերպում<br>• Ուղղակի ընտրությամբ համայնքի ղեկավար և ավագանի ընտրելու հնարավորություն: | • Ներհամայնքային և միջմարզային ճանապարհների անբարեկարգ վիճակ<br>• Ոռոգման համակարգի անբերակարգ վիճակ<br>• Համայնքային ենթակայության տակ գտնվող շենք շինությունների անբարեկարգ վիճակ<br>• Միջնակարգ դպրոցի անբարեկարգ վիճակ<br>• Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ<br>• Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ<br>• Թերզբաղվածության բարձր մակարդակ<br>• Երիտասարդության ժամանցային վայրերի բացակայություն<br>• Ֆինանսական ռեսուրսների պակաս<br>• Կենտրոնացված կոյուղու բացակայություն |
| **Հովտաշեն համայնքի հնարավորություններ** | **Հովտաշեն համայնքի սպառնալիքներ** |
| • Գյուղի աշխարհագրական դիրքը<br>• Ոռոգման ջրի պաշարի առկայություն<br>• Բերրի հողերի առկայություն | • Գյուղ. մթերքների գների նվազում<br>• Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն<br>• Գյուղ բերքի ցրտահարություն<br>• Արտագաղթ.<br>• Բնակչության աճի ցածր տեմպ |

[3] Նշյալ ճանապարհը Արմավիրի մարզը Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերն, ինչպես նաև ԼՂՀ-ն իրար կապող ամենակարճ հանգույցն է:

# 3.ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

## *3.1 Համայնքի զարգացման տեսլական*

Համայնքի զարգացման տեսլականն է ՝ ունենալ ֆինանսապես առավել ինքնաապահովված, բարեկեցիկ, զարգացած և բարձր հեղինակությամբ համայնք, որտեղ մարդիկ կապրեն արժանապատիվ կյանքով:

2017 թվականից մենք կնախաձեռնենք լայնամասշտաբ բարեփոխումների նոր փուլ, որը ներառում է հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտները: Այժմ մեր խնդիրն է բարեփոխումների առաջին արդյունքները ձևափոխել կայուն և հարատև ինստիտուցիոնալ հարաբերությունների, դրանք դարձնել բոլորի համար շոշափելի և տեսանելի: Տնտեսական աճ կարող ենք ապահովել արդար, օրենսդրորեն հստակ կարգավորված պայմանների պահպանման և միաժամանակ գյուղացիական տնտեսություններին հասցեական, թափանցիկ աջակցություն ապահովելու դեպքում: Գյուղատնտեսական քաղաքականության շրջանակներում նոր ներդրումների միջոցով  աշխատատեղ ստեղծող և արտահանում ապահովող ձեռնարկությունները կստանան առարկայական և թիրախային օժանդակություն: Միջոցառումների այս համախումբը կապահովի սեփականության պատասխանատու և արդյունավետ օգտագործումը, ինչն էլ գյուղատնտեսական ներուժի բացահայտման և իրագործման գրավականն է:

ՏԻՄ-ն ամեն ջանք գործադրելու է անհատ ձեռներեցների, գյուղացիական տնտեսությունների գործունեության պայմանների անշեղ բարելավման միջոցով նրանց եկամուտների շարունակական աճն ապահովելու համար: Հատկապես կարևորվելու է գյուղի և գյուղացու կյանքի բարելավման խնդիրը: Այստեղ թե՛ ավելացվելու են առկա գործիքներով գյուղացիական տնտեսություններին ցուցաբերվող աջակցության ծավալները, թե՛ մեկնարկելու է կարևորագույն ենթակառուցվածքային ծրագրեր՝ գյուղատնտեսության կենսունակությունը լրջորեն բարելավելու համար:

Համայնքային տնտեսությունների զարգացման հեռանկարը, որի հիմքում ընկած է «խելացի համայնքի» ձևավորման ռազմավարությունը հիմնականում կախված է տարբեր տեսլականներից, տեխնոլոգիական բաղադրիչներից, կազմակերպչական և տնտեսական բարեփոխումներից: Առավել ուշագրավ է «խելացի համայնքի» հայեցակարգի սկզբունքների վրա հիմնված Հովտաշեն համայնքի զարգացման միասնական մոտեցումը, որը ներառում է հետևյալ աշխատանքները.

- «Խելացի համայնքի» ռազմավարության զարգացման մշակում և ընդունում:
- Ռազմավարության իրականացման համար շահագրգիռ կողմերի և հասարակության հետ տարվող աշխատանք՝ ապահովելով կողմերի հավասարակշիռ շահերը:
- Աշխատանքային խմբի ստեղծում՝ «խելացի համայնքի» զարգացումը և ներդրումների ներգրավումը խթանելու և վերահսկելու համար:
- Ճանապարհային քարտեզի մշակում, որտեղ նախանշվում են ենթակառուցվածքների օբյեկտները:
- Տեխնիկատնտեսական ցուցանիշներով ներդրումային նախագծերի մշակում և հաստատում:
- Ինտեգրված տարածքի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի մշակում և ընդունում:
- Համայնքային կազմակերպությունների արտադրական ծրագրերի մշակում և հաստատում, որոնք ուղղված են նորարարության և զարգացման արդիականացմանը:

### *3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակները*

1. Համայնքի ճանապարհների մասով նախատեսվում է կենտրոնական փողոցի ասֆալտապատման խնդրի լուծում, ինչպես նաև ճանապարհամերձ հատվածների ջրահեռացման և ջրատար առուների վերականգնում և մաքրում:
2. Ոռոգման ջրագծերի բարեկարգում և հիմնանորոգում, նախատեսվում է նոր համակար-գեր կառուցել համայնք-բնակիչ համագործակցության բանաձևի գերակայությամբ:
3. Համայնքի բյուջեի եկամուտների ավելացման համար նախատեսվում է համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ ներդրումների իրականացում, որոնք ուղղված կլինեն գյուղատնտեսական արտադրությանը ու ծառայությունների մատուցմանը և համայնքում ձեռնարկատիրության զարգացմանը, համայնքային գույքը նպատակային վարձակալության տրամադրելու աշխատանքներ, մասնավորապես համայնքային հողերի վարձականությամբ տրամադրելը:
4. Աջակցել և խրախուսել գյուղացիական տնտեսությունների՝ կոոպերացիաների կազմավորմանը և զարգացմանը:
5. Միջնակարգ դպրոցի հիմնանորոգում և կոյուղու 60 մետր հատվածի վերակառուցում:
6. Մշակույթի, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման բնագավառում նախատեսվում է համայնքի մշակութային շենք շինությունների, մարզադաշտի, մարզահրապարակների, մարզասրահի կառուցապատման, բարեկարգ-ման աշխատանքներ, սպորտային և մշակութային միջոցառումների անցկացում:
7. Կանաչապատման մասով նախատեսվում է կանաչապատ տարածքների ավելացում՝ ծառատունկ, փողոցների մաքրման աշխատանքներ:
8. Նախադպրոցական դաստիարակության բնագավառում նախատեսվում է ցուցաբերել աջակցություն գործող մանկապարտեզի պայմանների բարելավման ուղղությամբ:
9. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում նախատեսվում է դասընթացների կազմակերպում, բնակչությանն իրազեկման ազդանշանային սարքավորումների տեղադրում, ապաստարանների կառուցում:
10. Պետական պաշտպանության աջակցման բնագավառում նախատեսվում է զինկոմիսարիատի հետ փոխհամագործակցություն, <<Աշխարհազոր>> ռազմա-հայրենասիրական ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում <<Մարտական պատրաստության ակումբի>> հիմնում:
11. Համայնքի սոցիալական պաշտպանության բնագավառում նախատեսվում է սոցիալա-կան նպաստների տրամադրում, ինչպես նաև բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում բնակիչներին որոշակի օգնության տրամադրում:

### *3.3 Համայնքի զարգացումն ապահովող ծրագրային արդի ուղղություններ*

Ինչպես վերևում արդեն նշվեց, որ համայնքային խնդիրների լուծման համար անհրաժեշտ սակավ ֆինանսական և այլ ռեսուրսների համատեքստում անհրաժեշտություն է առաջանում նոր մոդելների և մոտեցումների մշակումն ու ներդրումը: ՀԶԾ համատեքստում անընդհատ փորձելու ենք սահմանված խնդիրների լուծման ավանդական տարբերակներին զուգահեռ վերլուծել, մշակել և ներդնել ավելի արդիական գիտականորեն հիմնավորված և գործնա-

կանում իրենց արդարացրած համայնքային զարգացմանը միտված ծրագրեր: Այդ ծրագրերից են օրինակ՝

*1.Աշխատատեղերի և սոցիալական խնդիրների լուծման համար նախատեսվում է համայնք-մասնավոր համագործակցությամբ ստեղծել <<Հովտաշեն>> ՓԲԸ:*

*2. Մասնակցային կառավարման և բնակչության՝ տեղական ինքնակառավարմանը ներգրավվածության բարձրացման համար փոխմերի նեկայացուցիչներից ձևավորված Հովտաշենի քաղաքացիական նախաձեռնության խորհուրդի(ՀՔՆԽ) ստեղծումը:*

***Աշխատատեղերի և սոցիալական խնդիրների լուծման համար նախատեսվում է համայնք-մասնավոր համագործակցությամբ ստեղծել <<Հովտաշեն>> ՓԲԸ:*** Ծրագրի գաղափարն է Հովտաշեն համայնքում գյուղմթերքների արտադրության կազմակերպումը ջերմոցային տնտեսություններում և բացօթյա տարածքներում: Բիզնես ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից՝

- սոցիալապես անապահով ընտանիքների տնամերձ հողամասում ժամանակակից տեխնոլոգիաներով ջերմոցային տնտեսությունների հիմնում նոր ձևավորված ընկերության միջոցների հաշվին և ոչ համայնքային մասնավոր հատվածի ներգրավում ու նրանց պատվերով ջերմոցային տնտեսությունների հիմնման և շահագործման ծառայությունների մատուցում:
- գյուղնշանակության տեխնոպարկի ստեղծում և համապատասխան ծառայությունների մատուցում
- բաց գրունտում գյուղատնտեսական գործունեության ծավալում

Ծրագրի նպատակն է առաջին փուլում մեր համայնքի բնակիչներից առանձնացնել այն խմբերին, ովքեր գտնվում են սոցիալապես ծանր վիճակում և նրանց սեփական տնամերձ հողատարածքում պայմանագրային հիմունքներով ստեղծել ժամանակակից տեխնոլոգիաներով ջերմոցային տնտեսություններ՝ ստեղծելով նախ աշխատատեղ տվյալ բնակիչների համար անմիջապես իր <<դռան դիմաց>> և ապահովել կայուն եկամուտ հողամասի վարձավճարի տեսքով, ինչպես նաև լուծել սոցիալական խնդիր. պայքար գործազրկության և աղքատության դեմ:

Կազմակերպությունը մատուցելու է ծառայություններ հետևյալ ուղղություններով՝

1. Քաղաքբնակ մասնավոր սեկտորից ներգրավել անձանց, ովքեր ունեն դրամական միջոցներ և ցանկնում են հիմնել ջերմոցային տնտեսություններ: Նրանց և համայնքի չմշակվող հողատարածքներում աջակցել՝ հիմնելու ջերմոցային տնտեսություններ և զբաղվել դրանց շահագործմամբ՝ մատուցված ծառայությունների դիմաց վարձավճարով:
2. Ստեղծել իրացման բաժին՝ աջակցելով բնակիչներին բերքի իրացման հարցում ՀՀ-ում և ԵԱՏՄ տարածքում որոշակի կոմիսիոն վճարի դիմաց:
3. Ստեղծել գյուղմեքենաների տեխնոպարկ և մատչելի գներով ծառայություններ մատուցել:
4. Դառնալ համայնքի հողագործ բնակչի վստահելի գործընկերը համատեղ ուժերով խոշոր հողակտորներում հողագործության ծավալման հարցում՝ ստանալով եկամուտ մատուցված ծառայությունների և ներդրված միջոցների վերադարձից և ներդրված միջոցների՝ 5-10% հավելավճարից:

*Պահանջվող գումար*՝ 30.000.000 մլն դրամ

*Աշխատողների նախատեսվող քանակ*՝ սկզբնական 6-8

Շուկայի ուսումնասիրությունը կազմակերպել հետևյալ ուղղություններով՝

ա) գյուղմթերքների արտադրության կտրվածքով. ներհայաստանյան և ԵԱՏՄ շուրջ 180.000.000 միլիոնանոց շուկան վերջի 3-4 տարիների գյուղմթերքների շուկայի ուսումնասիրությունն և վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ այս ոլորտում ԵԱՏՄ տարածքում պահանջարկը աճող է, իսկ ջերմոցային տնտեսությունների բերքի նկատմամբ պայմանավորված սեզոնայնությամբ զարգացող է նաև հայկական շուկայում:

բ) գյուղտեխնիկայի և ջերմոցային տնտեսությունների շահագործման ծառայությունների մատուցման կտրվածքով հիմնական թիրախն է մեր համայնքն ու հարակից համայնքները, որտեղ, ըստ էության, նկատվում է գյուղտեխնիկայի իրական պահանջ՝ պայմանավորված մասնավորի ձեռքում գտնվող առկա տեխնիկայի բարոյական և ֆիզիկական մաշվածությամբ:

*Ձեռնարկության մարքեթինգային քաղաքականություն:*

Գովազդային և առաջմղման քաղաքականություն. - գովազդային քաղաքականության հիմնական ուղղություններն են լինելու ֆինանսական ռեսուրսներ տիրապետող քաղաքաբնակ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ովքեր ցանկություն ունեն ծավալելու գյուղա-տնտեսական գործունեություն՝ մասնավորապես ջերմոցային տնտեսությունների վարում, որոնց շրջանակներում պետք է իրականացնել մարքեթինգային քաղաքականություն՝ օգտագործելով սոցիալական ցանցերը, ինչպես նաև ուղիղ մարքեթինգի՝ մասնավորապես անհատական վաճառքի տեխնոլոգիաները:

Տարածման կապուղիների ձևավորման հարցում. - նախատեսվում է ԵԱՏՄ տարածքում Հայաստանից դուրս բնակվող արմատներով հովտաշենցիների հետ միասին իրացման վաճառքի ցանց ստեղծել, որոնց միջոցով հնարավոր կլինի ԵԱՏՄ-ում մասնավորապես ՌԴ-ում իրացնել հայկական բարձրորոկ բերքը:

Գնային քաղաքականություն. - գյուղմթերքների կտրվածքով որոնք արտահանվելու են վարվելու է *«բարձր որակ, բարձր գին»* քաղաքականությունը հենվելով ժամանակի ընթացքում ձևավորված հայկական մթերքների յուրահատուկ և որակական հատկանիշների վրա: Իսկ գյուղտեխնիկայի մատուցած ծառայությունների կտրվածքով՝ վարվելու է *«բարձր որակ, ցածր գին»* քաղաքականություն՝ հենվելով տեխնիկաների արդիականության և պետության կողմից վառելանյութերի սուբսիդավորման քաղաքականության վրա:

*Ծրագրի սոցիալ տնտեսական ազդեցությունը*

Ծրագիրը հիմնականում միտված է համայնքում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը: Ձևավորված եկամուտները հիմնականում ուղղվելու են համայնքային բյուջե և մասնավոր հատված, համապատասխանաբար 40% և 60%: Այս եկամուտները զգալիորեն կավելացնեն մեր համայնքի բյուջեի սեփական եկամուտները, որոնք վերջին տարիներին կազմել են մոտավորապես 4,5 մլն դրամ: Ինչ վերաբերվում է սոցիալական խնդիրների լուծմանը, ապա այս դեպքում սկզբնական թիրախ ընտրվելու է սոցիալապես անապահով ընտանիքները, որոնք ունեն անձնական սեփականություն հանդիսացող տնամերձ հողատարածքներ, սակայն չունեն հնարավորություն ժամանակակից

